# Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ




24 Նոյեմբեր 2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

# Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

## Nvidia-ն ֆինանսավորում է սեփական չիպերի նկատմամբ պահանջարկը:




Note: Equity stake figures are as of Sept. 30. Market capitalization figures are as of Nov. 18.
Sources: Securities and Exchange Commission (equity stake); FactSet (market capitalization)

## Դոլարը գտնվում է 2025 թվականի ապրիլից ի վեր ամենաբարձր մակարդակում:




## Նախորդ շաբաթ մետաղները նվազեցին 10%-15%-ով:




## Ուրանի շուկայում ներդրումային հնարավորություն է ձևավորվում:




Source: UxC Q3 2026 Uranium Market Outlook
*2026 data is as of September 30, 2026

Նախորդ շաբաթ S&P500-ը նվազեց 8.56%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը նվազեց 10.51%-ով






Նախորդ շաբաթ Dow Jones-ը նվազեց 7.94% -ով




Նախորդ շաբաթ Russell 2000-ը նվազեց 7.54%-ով



Նախորդ շաբաթ բոլոր ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսները գրանցեցին կտրուկ անկում, ընդ որում ամենամեծ կորուստը կրեց Nasdaq 100-ը՝ նվազելով ավելի քան 10%-ով:



Nasdaq-ը տարեսկզբից գրանցած աճը կորցրեց և անցավ բացասական տիրույթ:



Հատկանշական է, որ նախորդ շաբաթ ամենամեծ կորուստները գրանցվեցին տեխնոլոգիական ոլորտում, սակայն անկումից չեն խուսափել նաև պաշտպանական ոլորտները, այդ թվում՝ առաջին անհրաժեշտության սպառողական ապրանքների հատվածը:



NVIDIA-ն, որի շուկայական կապիտալիզացիան գագաթնակետին մոտեցել էր 6 տրիլիոն դոլարի, այժմ կորցրել է շուրջ 2.65 տրիլիոն դոլար և շուկայական կապիտալիզացիայով զիջում է GOOGL-ին, MSFT-ին և AAPL-ին:



NeoClouds-ը առավել զգայուն գտնվեց AI անկման նկատմամբ և նախորդ շաբաթ այս հարվածը արձա-նագրեց ավելի քան 20% անկում: NeoClouds տարեսկզբի համեմատ գտնվում է բացասական տիրույթում, չնայած հունիսին դրանց աճը գերազանցում էր 200%-ը:



# Բաժնետոմսերի շուկա | 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

NVIDIA-ն 2026 թվականի երրորդ եռամսյակում գրանցել է 115.8 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան աճը 103%-ով: Զուտ շահույթը կազմել է 65.3 մլրդ դոլար, իսկ մեկ բաժնետոմսի հաշվով շահույթը (EPS)՝ 2.70 դոլար: Հիմնական աճի շարժիչը Data Center ուղղությունն է, որի հասույթը կազմել է 107.6 մլրդ դոլար՝ տարեկան աճը 110%-ով: Համախառն մարժան կազմել է 74.8%, իսկ գործառնական շահույթը՝ 77.5 մլրդ դոլար: Ընկերությունը շարունակում է ընդլայնել AI հաշվողական ենթակառուցվածքների իր առաջարկը:




Walmart-ը 2026 թվականի երրորդ եռամսյակում գրանցել է 188.8 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան աճը 5.2%-ով: Զուտ վաճառքները կազմել են 186.8 մլրդ դոլար, իսկ զուտ շահույթը՝ մոտ 4.9 մլրդ դոլար: Մեկ բաժնետոմսի հաշվով շահույթը (EPS) կազմել է 0.62 դոլար: Աճին նպաստել է էլեկտրոնային առևտրի ուղղությունը, որի համաշխարհային վաճառքներն աճել են 17%-ով, իսկ ԱՄՆ-ում՝ 23%-ով: Գործառնական շահույթն աճել է 16%-ով՝ հասնելով 7.77 մլրդ դոլարի: Ընկերությունը նաև բարձրացրել է 2027 թվականի կանխատեսումները:



# Բաժնետոմսերի շուկա | 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Home Depot-ը 2026 թվականի երրորդ եռամսյակում ստացել է 43.4 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան աճը 4.9%-ով: Զուտ շահույթը կազմել է 3.7 մլրդ դոլար, իսկ մեկ բաժնետոմսի հաշվով շահույթը (EPS)՝ 3.72 դոլար: ԱՄՆ-ում համադրելի վաճառքներն աճել են 2.2%-ով: Գործառնական շահույթը կազմել է 5.48 մլրդ դոլար, իսկ գործառնական մարժան՝ 12.6%: Ընկերությունը պահպանել է իր տարեկան կանխատեսումները՝ ակնկալելով շուրջ 4.5% վաճառքների աճ և մեկ բաժնետոմսի հաշվով շահույթի 1.5% աճ:




Palo Alto Networks-ը վերջին եռամսյակում գրանցել է 3.45 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան աճը 39%-ով: Զուտ շահույթը կազմել է 482 մլն դոլար, իսկ EPS-ը՝ 0.57 դոլար: Աճին նպաստել է կիբերանվտանգության ծառայությունների պահանջարկը, Next-Generation Security ARR-ը տարեկան աճել է 66%-ով՝ հասնելով 9.73 մլրդ դոլարի, իսկ ապագա պայմանագրերի մնացորդային արժեքը (RPO) աճել է 35%-ով՝ հասնելով 21 մլրդ դոլարի: Գործառնական շահույթը կազմել է 96 մլն դոլար: Ընկերությունը բարձրացրել է տարվա կանխատեսումները՝ ակնկալելով 14.52–14.57 մլրդ դոլարի հասույթ:



# Պարտատոմսերի շուկա | Տոկոսադրույքի սպասումներ

Նախորդ շաբաթվա վերջում 2026 թվականին տոկոսադրույքների բարձրացման սպասումները զգալիորեն թուլացան՝ շուկայի կանխատեսումները տեղափոխելով դեպի 2027 թվական:



# Պարտատոմսերի շուկա

ԱՄՆ 10-ամյա գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը 5.17%-ից նվազեց մինչև 4.90%-ի, իսկ 2-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց ավելի քան 20 բազիսային կետով: 10-ամյա պարտատոմսերի եկամտաբերության նվազումը ընդհատեց 2007 թվականից ի վեր 5%-ից բարձր մակարդակում դրանց գտնվելու ամենաերկարատև շրջանը: Միաժամանակ, 5-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց 10 բազիսային կետով՝ հասնելով 4.90%-ի:



Դոլարը մնացած ֆիատ արժույթների նկատմամբ շարունակում է մնալ իր ամենաուժեղ դիրքում՝ 2025 թվականի ապրիլից ի վեր:

Բրազիլական ռեալը գրանցեց 2024թ. նոյեմբերից ի վեր ամենավատ շաբաթը, քանի որ ներդրողները զանգվածաբար դուրս էին գալիս բարձր ռիսկային և carry trade-ի արժույթներից: Սակայն ԱՄՆ շուկաներում տիրող քաոսի պայմաններում, ապահով ապաստարանի նկատմամբ պահանջարկը տեղափոխվեց դեպի ճապոնական իեն:






# Պարտատոմսերի շուկա | Սփոթ ոսկի

Ոսկու գինը 2025 թվականի սեպտեմբերից ի վեր առաջին անգամ նվազեց 3,600 դոլարից ցածր՝ պահպանելով անկման միտումը:



Նախորդ շաբաթվա ընթացքում արծաթի գինը նվազել է 15%-ով, իսկ պղնձի և ոսկու գները մոտ 10%-ով:



Չնայած Մերձավոր Արևելքում ռազմական լարվածության սրմանը և նավագնացության դեմ Իրանի հարձակումների կրկնապատկմանը, նավթի գները շաբաթվա ընթացքում նվազեցին շուրջ 5%-ով: WTI-ն օգոստոսից ի վեր առաջին անգամ նվազեց 85 դոլարից ցածր:



**Բիթքոինի համար շաբաթը աղետալի էր**

Լիկվիդացիաների շղթայական ալիքից հետո գինը չկարողացավ վերականգնվել՝ գրանցելով անկում 7-րդ շաբաթն անընդմեջ: Արդյունքում, այն հասավ 2024 թվականի սեպտեմբերից ի վեր նվազագույն մակարդակին:



**Nvidia-ն ֆինանսավորում է սեփական չիպերի նկատմամբ պահանջարկը**

Nvidia-ն ավելի քան 100 մլրդ դոլարի ներդրումային պորտֆել ունի AI-ի, չիպերի արտադրության և տվյալների կենտրոնների ոլորտներում: Ընկերությունը կապիտալ է տրամադրում այն կազմակերպություններին, որոնք հետագայում գնում են իր արտադրանքը՝ ձևավորելով փակ ֆինանսական էկոհամակարգ: Միաժամանակ, Nvidia-ի ապագա ֆինանսական պարտավորությունները հասել են ռեկորդային 518 մլրդ դոլարի: Սա մեծացնում է շրջանաձև ֆինանսավորման ռիսկը, երբ AI ոլորտի պահանջարկը մասամբ ձևավորվում է հենց Nvidia-ի ներդրումներով:




Note: Equity stake figures are as of Sept. 30. Market capitalization figures are as of Nov. 18.
Sources: Securities and Exchange Commission (equity stake); FactSet (market capitalization)

### Արդյո՞ք սցենարը կկրկնվի

Ոսկու գնի ընթացիկ շարժը գրեթե կրկնում է 2011-2012-ի սցենարը՝ գագաթնակետ, կտրուկ անկում և վերականգնում: 2012 թվականին նմանատիպ անկումից հետո ոսկին կտրուկ վերականգնվեց, սակայն հետագայում նվազման միտումը վերսկսվեց:



Հորմուզի նեղուցով անցնող պարարտանյութերի մատակարարումները կազմում էին համաշխարհային առևտրի շուրջ 20%-ը, սակայն այժմ դրանք ամբողջությամբ դադարել են: Միևնույն ժամանակ, ազոտական պարարտանյութերն ապահովում են համաշխարհային պարենի արտադրության մոտ 50%-ը: Այսպիսով, աշխարհը կորցնում է պարենի արտադրության երկու կարևորագույն ռեսուրսների՝ դիզելային վառելիքի և պարարտանյութերի հասանելիությունը: Դիզելային վառելիքի և պարարտանյութերի պակասը կհանգեցնի գյուղատնտեսական արտադրության ծավալների նվազմանը, ինչն իր հերթին կբարձրացնի պարենային գները: Սա կարող է պառաջացնել նոր գնաճային ալիք:



# Հետաքրքիր փաստեր

Արծաթը ներկայումս գրեթե նույնքան գերվաճառված (oversold) վիճակում է, որքան 2020 թվականի մարտին: Այդ ժամանակից հետո՝ հաջորդ 6 տարիների ընթացքում, դրա գինն աճեց մոտ 10 անգամ:



**Ուրանի շուկայում մեծ ներդրումային հնարավորություն է ձևավորվում**

Տարեսկզբից ուրան արդյունահանող ընկերությունների բաժնետոմսերը նվազել են շուրջ 30%-ով, մինչդեռ սպոտ գինը գրեթե չի փոխվել՝ մնալով 90 դոլարի սահմանում: Երկարաժամկետ պայմանագրային գինը կազմում է շուրջ 96 դոլար: Վերջին տարիներին էներգետիկ ընկերությունները բարձր գների պատճառով խուսափել են նոր գնումներից՝ սպառելով սեփական պաշարները: Սակայն դրանք անսահմանափակ չեն: Պաշարները համալրելու նպատակով շուկա նրանց վերադարձը կարող է առաջացնել պահանջարկի կտրուկ աճ՝ սահմանափակ առաջարկի պայմաններում:




*Source: UxC Q3 2026 Uranium Market Outlook*
**2026 data is as of September 30, 2026*

# Կորպորատիվ հաշվետվությունների ցանկ

Այս շաբաթ 70, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Dell Technologies Inc. (DELL), Analog Devices, Inc. (ADI), Deere & Company (DE), Medtronic plc (MDT), Autodesk, Inc. (ADSK), Dollar Tree, Inc. (DLTR), Li Auto Inc. (LI) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

| No. | Ticker | Company | Sector | Industry | Country | ↓ Market Cap | P/E | Price |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | DELL | Dell Technologies Inc | Technology | Computer Hardware | USA | 198.72B | 18.14 | 312.54 |
| 2 | ADI | Analog Devices Inc | Technology | Semiconductors | USA | 182.89B | 44.79 | 377.44 |
| 3 | DE | Deere & Co | Industrials | Farm & Heavy Construction Machinery | USA | 168.49B | 34.73 | 624.89 |
| 4 | MDT | Medtronic Plc | Healthcare | Medical Devices | Ireland | 128.70B | 24.77 | 100.61 |
| 5 | HPE | Hewlett Packard Enterprise Co | Technology | Communication Equipment | USA | 60.39B | 23.72 | 45.49 |
| 6 | ADSK | Autodesk Inc | Technology | Software - Application | USA | 50.88B | 31.54 | 243.45 |
| 7 | A | Agilent Technologies Inc | Healthcare | Diagnostics & Research | USA | 49.43B | 34.52 | 175.34 |
| 8 | WDAY | Workday Inc | Technology | Software - Application | USA | 41.78B | 35.18 | 173.36 |
| 9 | DLTR | Dollar Tree Inc | Consumer Defensive | Discount Stores | USA | 26.31B | 17.13 | 140.24 |
| 10 | HPQ | HP Inc | Technology | Computer Hardware | USA | 25.09B | 10.61 | 27.82 |
| 11 | ZM | Zoom Communications Inc | Technology | Software - Application | USA | 24.46B | 7.76 | 83.82 |
| 12 | BBY | Best Buy Co Inc | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 20.82B | 16.52 | 99.27 |
| 13 | SYM | Symbotic Inc | Industrials | Specialty Industrial Machinery | USA | 20.06B | 367.63 | 33.16 |
| 14 | J | Jacobs Solutions Inc | Industrials | Engineering & Construction | USA | 18.09B | 54.26 | 154.58 |
| 15 | NTNX | Nutanix Inc | Technology | Software - Infrastructure | USA | 15.61B | 11.09 | 57.24 |
| 16 | BURL | Burlington Stores Inc | Consumer Cyclical | Apparel Retail | USA | 15.42B | 22.03 | 245.54 |
| 17 | SJM | J.M. Smucker Co | Consumer Defensive | Packaged Foods | USA | 14.02B | 61.56 | 131.29 |
| 18 | DKS | Dicks Sporting Goods Inc | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 12.11B | 14.62 | 136.14 |
| 19 | SMTC | Semtech Corp | Technology | Semiconductors | USA | 9.50B | 67.67 | 101.81 |
| 20 | LI | Li Auto Inc ADR | Consumer Cyclical | Auto Manufacturers | China | 9.15B | - | 11.24 |

AraratBank

# Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Monday, Nov. 23 | | | | | | |
| | 9:45 AM | US Flash Manufacturing PMI | Nov. | - | - | 56 |
| | 9:45 AM | US Flash Services PMI | Nov. | - | - | 57.9 |
| | 4:00 PM | FRB New York President John Williams speaks at University of Mount Saint Vincent | - | - | - | - |
| Tuesday, Nov. 24 | | | | | | |
| | 9:00 AM | S&P Cotality Case-Shiller Home Px Index | Sep | - | - | -0.4% |
| | 10:00 AM | Conference Bd - Consumer Confidence | Nov. | - | - | 91.7 |
| Wednesday, Nov. 25 | | | | | | |
| | 8:30 AM | 2nd estimate GDP | 3Q | - | - | 3.4% |
| | 8:30 AM | Weekly Jobless Claims | Nov. 21 | - | - | 203K |
| | 8:30 AM | Durable Goods | Oct. | - | - | 1.8% |
| | 8:30 AM | Personal Income, M/M% | Oct. | - | - | 0.2% |
| | 8:30 AM | Consumer Spending, M/M% | Oct. | - | - | 0.5% |
| | 8:30 AM | PCE Price Idx, M/M% | Oct. | - | - | 0.5% |
| | 8:30 AM | PCE Price Idx, Y/Y% | Oct. | - | - | 3.6% |
| | 8:30 AM | PCE Core Price Idx, M/M% | Oct. | - | - | 0.3% |
| | 8:30 AM | PCE Core Price Idx, Y/Y% | Oct. | - | - | 3.1% |
| | 10:00 AM | New Home Sales | Oct. | - | - | 676K |
| | 2:00 PM | Federal Reserve Beige Book | - | - | - | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Thursday, Nov. 26 | | | | | | |
| No events scheduled | | | | | | |
| Friday, Nov. 27 | | | | | | |
| | 8:30 AM | Advance U.S. Trade Balance in Goods | Oct. | - | - | -134.9B |
| | 8:30 AM | Wholesale Inventories | Oct. | - | - | 0.6% |
| | 8:30 AM | Retail Inventories | Oct. | - | - | 0.3% |




060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am